2

Ավտոպատահար Սարալանջի փողոցում

Առաջին հրշեջ - շարժասանդուղքը

3

5

Ահազանգի հետքերով

Մարդը մշակույթների խաչմերուկում

7

ISSN 1829-149X

Արտակարգ թերթ

ով իրազեկված է, նա զգաստացված է

N 12 (333) 9.4.2010 - 15.4.2010 www.emergency.am

Փրկարարները միայն տղամարդիկ չեն կամ շնորհավոր ապրիլի 7

19-ամյա Վիկտորիան Հայաստանի առաջին ու միակ կին փրկարարն է

Լիլիթ Ղազարյանը Հատուկ փրկարարական ջոկատի հետախույզ - կինոլոգն է: 2003 թվականից վարժեցնում է ջոկատի փրկարար շներին: Նրա ու Թոմի անունով շան ընկերությունն արդեն 7 տարվա պատմություն ունի: Միասին շատ փրկարարական աշխատանքների են մասնակցել, մարդկանց գտել ու փրկել:

- Իմ գործն այն է, որ շանը ղեկավարեմ, նա գնա, փնտրի տուժածներին, գտնի ու տեղը ցույց տա, որ հետո փրկարարները գան ու օգնեն նրանց, - բացատրում է Լիլիթը:

Նա կարծում է, որ տղամարդուց էլ, կնոջից էլ լավ կինոլոգ դուրս կգա: Տղամարդիկ, սակայն, շներ վարժեցնելիս ավելի խիստ են ու իշխող, իսկ կանայք նույնիսկ այս հարցում չեն կարողանում մի կողմ դնել իրեն կանացիությունը:

- Մենք ավելի զգայուն ենք, շանը շատ ենք ցույց տալիս, որ սիրում ենք իրեն: Օրինակ, երբ ես հրամայում եմ իրեն ինչ-որ բան անել, հետո սկսում եմ սիրել, շոյել, - ասում է Լիլիթը:

Շատ է պատահել, երբ Լիլիթն ու շունը տղամարդ փրկարարների հետ ոտքով երկար ճանապարհ են կտրել դժվարանցանելի վայրերով, սարեր բարձրացել: Գործը որքան դժվար, այնքան էլ՝ հետաքրքիր է:

- Դժվար է իհարկե, բայց երբ կողքիդ 15 լավ ընկերներ են, ամեն ինչ հեշտանում է, - ասում է նա:

Հատուկ փրկարարական ջոկատի պարամեդիկ Արփենիկ Չիլինգարյանն էլ այսօր հերթափոխի չէ: Նման օրերին նա սովորաբար տան գործերով է զբաղվում, թատրոն այցելում, հյուր գնում կամ հյուր ընդունում: Սակայն ոչ մի վայրկյան չի մոռանում, որ ինքը փրկարար-պարամեդիկ է:

- Երբ հարեւանների հետ մի բան է պատահում՝ վատանում են, գնում, օգնում եմ: Մինչեւ շտապօգնություն են կանչում, ես առաջինն եմ այնտեղ օգնության հասնում, - ասում է Արփենիկը:

Նա Հատուկ փրկարարական ջոկատում է հիմնադրման ամենասկզբից՝ 1997 թվականից: Դրանից առաջ աշխատել է հիվանդանոցում, բայց երբ իմացավ՝ նման ջոկատ է ստեղծվում, առանց երկմտելու դիմեց, որ իրեն էլ ընդունեն: Դեռ Սպիտակի երկրաշարժի ժամանակ էր հասկացել, թե փրկարար ջոկատներն ինչ կարեւոր նշանակություն ունեն:

- Դժվար ու պատասխանատու աշխատանք ենք մենք կատարում: Անբացատրելի զգացողություն է, երբ փրկում ես մեկին, կյանք ես պարգեւում նրան: Ոչ մի բանի հետ փոխել չի լինի այդ զգացողությունը,- ասում է Արփենիկը:

Հատուկ փրկարարական Ջոկատի տղաների համար Արփենիկը եւ քույր է, եւ լավ ընկեր, իսկ երբ վտանգավոր աշխատանքներ կատարելու են գնում, իր փրկարար գործընկերների համար մոր պես է անհանգստանում:

- Ես նրանց հետ հավասար բոլոր ապրումներն ունենում եմ, - անկեղծ խոստովանում է նա:

Արփենիկը 18 ամյա որդի ունի՝ Կորյունը: Ապրիլի 7-ին՝ մայրության տոնին, առաջին շնորհավորանքը, հենց որդուց է ստացել: Կորյունի մասին առանց հուզմունքի չի կարողանում խոսել. նա ծառայության մեջ է:

- Ես բոլոր մայրերին մաղթում եմ առողջություն, թող հպարտ լինեն, որ իրենց որդիները ծառայում են, Հայաստան աշխարհին էլ թող խաղաղություն լինի, որ մեր բալիկները գան հասնեն մեզ:

Արփենիկը պահարանում ժամացույց ունի, որը հիշեցնում է՝ մի անգամ ինքն էլ օգնել է մի ուրիշ կնոջ՝ մայր դառնալ:

- Երեւան-Վարդենիս ճանապարհին տեսանք՝ մարդիկ են հավաքված, մտածեցինք վթար է, մոտեցանք, պարզվեց մի կնոջ մոտ վաղաժամ ծննդաբերություն է սկսվել: Ամուսինը խառնվել էր իրար, չգիտեր՝ ինչ աներ: Ես էլ օգնեցի, որ ծննդաբերի: Տղա ծնվեց: Հետո այդ մարդիկ եկան ինձ տեսակցության, ու ժամացույցը նվեր բերեցին, - պատմում է Արփենիկը:

19-ամյա Վիկտորիան էլ Հայաստանի առաջին ու միակ կին փրկարարն է: Մինչ փրկարար դառնալը փորձել է Ոստիկանական ակադեմիա ընդունվել, չի ստացվել: Հետո սովորել է թիկնապահների քոլեջում, ավարտել է ու որոշել, որ հիմա էլ պիտի ուժերը փորձի փրկարարության ոլորտում: Սովորում է ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտի փրկարարական ֆակուլտետում ու աշխատում է Հատուկ փրկարարական ջոկատում:

- Ես պաշտում եմ էքստրեմալությունը, շատ եմ սիրում նաեւ մարդկանց փրկել, - խոստովանում է Վիկտորիան:

Դասարանցիները բժշկի, իրավաբանի ու դատափորձագետի մասնագիտությունն ընտրեցին, իսկ Վիկտորիան որոշեց զարմացնել բոլորին ու կարծես թե՝ ստացվեց: Բայց շատ զարմանալ պետք չէ, կին ու փրկարար հասկացությունները համատեղվում են՝ համոզված է նա:

- Ես ինձ ավելի պարտավորված եմ զգում լավ աշխատել, որովհետեւ մարդիկ կան, որ թերահավատորեն են մոտենում, իսկ ես ուզում եմ ապացուցել, որ կինն էլ կարող է փրկարար լինել, - ասում է Վիկտորիան:

Նա խոստովանում է, որ տղամարդ գործընկերները երբեմն խտրականություն են դնում, բայց դա իրեն չի բարկացնում, հասկանում է, որ դա բնական է:

- Տղաներն ինձ փորձում են հետ պահել դժվար գործերից, բայց եթե ես գիտեմ, որ հաստատ կարող եմ անել այսինչ բանը, անում եմ, - ասում է Վիկտորիան:

>>> 4

«Արտակարգ ալիք» հեռուստահաղորդում

- Հայ փրկարարների առօրյայից. ամենադժվար պահին նրանք ձեր կողքին են:
- Արտակարգ իրավիճակների նախարարության նոր ռազմավարությունը:
- Ինչպիսի՞ն է Հրդեհային անվտանգությունը Մատենադարանում, Ազգային պատկերասրահում, Օպերայի եւ բալետի թատրոնում, Մարզահամերգային համալիրում:
- Շինարարական վերամբարձ կռունկի նոր թռիչքը. ոչ մի զիջում անվտանգության խնդրում:
- Կանայք Փրկարար ծառայությունում:

Այս եւ այլ ուշագրավ թեմաների մասին՝ ուրբաթ, ապրիլի 9-ին, 23:20-ին՝ Շանթի եթերում: Կրկնությունը՝ շաբաթ, 10:55-ին եւ կիրակի, 12:25-ին:

«Էլիտ գրուպ». կյանքի նոր որակ

Սեյսմակայուն էլիտար շինարարության առաջատարը տարածաշրջանում

E-mail: info@elitegroup.am; URL: www.elitegroup.am

Հակասեյսմիկ համակարգերի միջազգային ասոցիացիայի անդամ «Էլիտ Գրուպ» ընկերությունը տարածաշրջանի առաջատարն է սեյսմակայուն շինարարության ոլորտում:

Առաջին անգամ Հայաստանում «Էլիտ Գրուպի» շենքերում սկսեցին կիրառել ռետինամետաղյա շերտավոր բարձիկներ, որոնցով երկնաքերներ են կառուցում Ճապոնիայում, ԱՄՆ-ում, Չինաստանում եւ այլուր:

«Էլիտ Գրուպը» միակ ընկերությունն է Հայաստանում, որն արժանացել է միջազգային հեղինակավոր վկայականների՝ կառավարման, աշխատանքի պաշտպանության եւ անվտանգության ոլորտներում:

«Էլիտ Գրուպ»՝ բնակելի, առեւտրային, առողջարանային ու հյուրանոցային համալիրներ, ամբողջական թաղամասեր, տարածաշրջանային ծրագրեր, տեղական ու միջազգային հեղինակավոր ու հուսալի գործընկերներ:

Ճիշտ կառավարումը գիտություն է, իսկ «Էլիտ Գրուպը» կառավարվում է գիտնականների կողմից:

Երեւան, Պուշկինի 21, ☎ 56-69-22, 56-69-33:

քրոնիկոն

Հայաստանի փրկարար ծառայություն զանգահարեք

1-01, 1-12

Բախվել են ավտոբուսն ու մարդատար մեքենան

Ապրիլի 1-ին, ժամը 16.24-ին ահազանգ է ստացվել, որ Երեւան-Աշտարակ ավտոճանապարհի 15-րդ կմ-ում տեղի է ունեցել ճանապարհատրանսպորտային պատահար, կան տուժածներ, եւ անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր են մեկնել մեկ մարտական հաշվարկ եւ Արագածոտնի մարզային փրկարարական վարչության օպերատիվ խումբը:

Դեռեւս չպարզված հանգամանքներում՝ բախվել են Երեւան-Աշտարակ-Բյուրական երթուղու «ԼԱԶ» մակնիշի 22-57 պետհամարանիշի ավտոբուսը (վարորդ՝ 1945թ. ծնված Մ. Ավետիսյան) եւ «Միթսուբիշի Պաջերո» մակնիշի 16 SL 665 պետհամարանիշի ավտոմեքենան (վարորդ՝ 1985թ. ծնված Գ. Ղազարյան):

Պատահարի հետեւանքով ավտոբուսի 11 եւ ավտոմեքենայի 3 ուղեւոր ստացել են տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

Տուժածներին փրկարարների կողմից ցուցաբերվել է առաջին բուժօգնություն, այնուհետեւ 13-ը տեղափոխվել են Աշտարակի հիվանդանոց (վիճակները գնահատվել է բավարար), մեկը՝ Երեւանի «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն (վիճակը՝ կայուն ծանր):

Ավտոպատահար Սարալանջի փողոցում

Ապրիլի 2-ին, ժամը 10.15-ին տեղեկություն է ստացվել, որ Երեւանի Սարալանջի փողոցում տեղի է ունեցել ճանապարհատրանսպորտային պատահար:

Երեւան քաղաքի ճանապարհային ոստիկանությունից ճշտված տեղեկության համաձայն՝ «ՎԱԶ-2109» մակնիշի 02 ՍՏ4 39 պետհամարանիշի ավտոմեքենան բախվել է «ԳԱԶել» մակնիշի 2469 Տ պետհամարանիշի թիվ 113 երթուղային տաքսուն, ինչի հետեւանքով միկրոավտոբուսը շրջվել է:

Վթարի հետեւանքով թեթեւ մարմնական վնասվածքներ են ստացել՝ 1981 թ. ծնված Հասմիկ Թամրազյանը, 1961 թ. ծնված Գրիգոր Մարտիրոսյանը եւ 2000 թ. ծնված Ինա Կիրակոսյանը:

Տուժածներին ցուցաբերվել է առաջին բուժօգնություն:

Ավտոմեքենան շրջվել է

Ապրիլի 2-ին, ժամը 22.30-ին Լոռու մարզից տեղեկություն է ստացվել, որ Ստեփանավան-Տաշիր ավտոճանապարհի 1-ին կիլոմետրում տեղի է ունեցել ավտոպատահար, եւ անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել մարզային փրկարարական վարչության փրկարար ջոկատը:

Դեռեւս չպարզված հանգամանքներում՝ շրջվել է «ԻԺ» մակնիշի 04 LO 805 պետհամարանիշի ավտոմեքենան (վարորդ՝ Ստեփանավանի Աշոտաբերդ թաղամասի բնակիչ Ա. Սարգսյան):

Փրկարարների ուժերով ավտոմեքենան դուրս է բերվել ճանապարհի երթեւեկելի մաս եւ հանձնվել ոստիկանության աշխատակիցներին:

Տուժածներ չկան:

Մեքենան ընկել է գետը

Ապրիլի 2-ին, ժամը 22.35-ին ստացված ահազանգի համաձայն՝ ճանապարհատրանսպորտային պատահար է տեղի ունեցել Վանաձոր-Ալավերդի ավտոճանապարհի 18-րդ կիլոմետրում:

Դեպքի վայր է մեկնել Լոռու մարզային փրկարարական վարչության փրկարար ջոկատը:

Դեռեւս չպարզված հանգամանքներում՝ Երեւանի Ազատամարտիկների 85/9 հասցեի բնակիչ Ա. Սահակյանին պատկանող «Մերսեդես» մակնիշի MFM 258 պետհամարանիշի ավտոմեքենան դուրս է եկել ճանապարհի երթեւեկելի հատվածից եւ ընկել Փամբակ գետը:

Փրկարարների ուժերով ավտոմեքենան դուրս է բերվել գետից:

Տուժածներ չկան:

Ճանապարհից դուրս

Ապրիլի 3-ին, 02.45-ին ահազանգ է ստացվել, որ Աշտարակ-Երեւան ավտոճանապարհի 10-րդ կիլոմետրում տեղի է ունեցել ավտոպատահար, եւ անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել Աշտարակից մեկ մարտական ջոկ:

Դեռեւս չպարզված հանգամանքներում՝ «ՎԱԶ-21015» մակնիշի 03 ՍԼ 337 պետհամարանիշի ավտոմեքենան (վարորդ, Աշտարակի բնակիչ Ս. Ազիզյան) դուրս է եկել ճանապարհի երթեւեկելի մասից:

Հրշեջ-փրկարարների ուժերով ավտոմեքենան տեղափոխվել է երթեւեկելի հատված:

Տուժածներ չկան:

Ջոհ եւ ծանր վիրավորներ ավտոպատահարից

Ապրիլի 6-ին, ժամը 12.15-ին տեղեկություն է ստացվել, որ Երեւան-Գյումրի ավտոճանապարհի 57-րդ կմ-ում՝ Ներքին Բազմաբերդ գյուղի մոտ, տեղի է ունեցել ավտոպատահար, կա զոհ եւ վիրավորներ, եւ անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ:

Դեռեւս չպարզված հանգամանքներում իրար են բախվել «Ռենջ Ռովեր» մակնիշի WVB501 Վրաստանի պետհամարանիշով եւ «ԲՄՎ» մակնիշի 09 LO 062 պետհամարանիշով ավտոմեքենաները, ինչի հետեւանքով «ԲՄՎ» մակնիշի ավտոմեքենայի ուղեւոր, Երեւանի բնակչուհի, 1951 թ. ծնված Անահիտ Անդրեասյանը տեղում մահացել է:

«Ռենջ Ռովեր» մակնիշի ավտոմեքենայի վարորդ՝ ՌԴ Սոչի քաղաքի բնակիչ, 1982 թ. ծնված Խաչատուր Նորվարդյանը եւ ուղեւոր՝ Վրաստանի Հանրապետության Ախալքալակի քաղաքի բնակչուհի, 1984 թ. ծնված Լիաննա Աբաջյանը տեղափոխվել են Թալինի հիվանդանոց:

Հրշեջ-փրկարարների ուժերով «ԲՄՎ» մակնիշի ավտոմեքենայից դուրս են բերվել վարորդ՝ Երեւանի բնակիչ, 1985 թ. ծնված Տիգրան Թովմասյանը եւ ուղեւորներ՝ Վայոց ձորի մարզի Ելփին գյուղի բնակիչ, 1987 թ. ծնված Կարեն Հակոբյանը, Գյումրիի բնակչուհի, 1979 թ. ծնված Հասմիկ Պետրոսյանը եւ Գավառի բնակիչ, 1985 թ. ծնված Հակոբ Մարուխյանը, որոնք տարբեր մարմնական վնասվածքներով տեղափոխվել են Թալինի հիվանդանոց:

Ավելի ուշ Խ. Նորվարդյանը, ստանալով առաջին բուժօգնություն, դուրս է գրվել հիվանդանոցից:

Տ. Թովմասյանը տեղափոխվել է Երեւանի «Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն: Նրա վիճակը գնահատվում է միջին ծանրության:

Հ. Մարուխյանը տեղափոխվել է Երեւանի «Արմենիա», իսկ Լ. Աբաջյանը եւ Հ. Պետրոսյանը՝ «Էրեբունի» բժշկական կենտրոններ: Ըստ բժիշկների՝ նրանց վիճակը ծանր է:

Պոկվել է շենքի տանիքը

Ապրիլի 3-ին Շիրակի մարզից տեղեկություն է ստացվել, որ մասամբ թեքվել է Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոցի թիվ 22ա շենքի տանիքը:

Դեպքի վայր է մեկնել մարզային փրկարարական վարչության փրկարար ջոկատը:

Տեղում պարզվել է, որ նշված հինգհարկանի շենքի 15 քմ մակերեսով մետաղյա տանիքը ուժեղ քամուց պոկվել է եւ կախվել:

Փրկարարների կողմից, հատուկ սարքավորումների օգնությամբ, ամբողջությամբ վնասազերծվել է տանիքի կախված հատվածը:

Դեպքի մասին տեղյակ է պահվել Գյումրիի քաղաքապետարանը:

>>>

միջազգային լուրեր

Ռիո դե Ժանեյրոն ջրի տակ է անցել

Բրազիլիայի Ռիո դե Ժանեյրո նահանգի մեծ մասը ջրի տակ է անցել: Հեղեղման պատճառ են

դարձել չդադարող տեղատարափ անձրեւները: Վերջին տվյալներով՝ ջրհեղեղների ու սողանքների զոհ է դարձել 138 մարդ, մոտ երկու հազարը մնացել են անտուն: Փրկարարները շարունակում են անհետ կորածների որոնումները: Նահանգում հայտարարվել է արտակարգ դրություն:

Ռիո դե Ժանեյրոյի քաղաքապետի խոսքերով՝ քաղաքում քառասուն է տիրում, կենտրոնական փողոցները հեղեղված են, օդանավակայանները՝ փակ, երթեւեկությունը կաթվածահար է եղել:

Ջրհեղեղից հատկապես տուժել են քաղաքի աղքատ արվարձանները, որոնք գտնվում են ցածրադիր վայրերում: Ըստ Ռիո դե Ժանեյրոյի քաղաքապետի՝ հորդառատ անձրեւներին պատրաստվածությունը «զրոյից էլ ցածր էր»: Աղետի գոտի է այցելել երկրի նախագահը:

Պայթյուն հանքահորում

ԱՄՆ-ի Արեւմտյան Վիրջինիա նահանգի հանքահորերից մեկում ուժգին պայթյուն է որոտացել: Վերջին տվյալներով՝ զոհվել է 25 մարդ, չորս հանքափոր համարվում է անհետ կորած:

Մարդկանց որոնումները ժամանակավորապես դադարեցվել են, քանի որ հանքում մեթանի բարձր մակարդակի կուտակման պատճառով նոր պայթյունի սպառնալիք էր առաջացել:

Այժմ հետաքննվում են միջադեպի հանգամանքներն ու մանրամասները, որոնք հանգեցրել են ողբերգության: Միեւնույն ժամանակ համապատասխան ծառայության մասնագետները հայտարարել են, որ հանքում անհրաժեշտ ձեւով չեն պահպանվել անվտանգության կանոնները: Ստուգողներն առաջին անգամ չէ, որ մեթանի մեծ քանակություն են հայտնաբերել հանքում:

Սփորգետնյա պայթյուն Նյու Յորքում

Երեքշաբթի օրը Նյու Յորքի կենտրոնում՝ Թայմս Սքվեր հրապարակում տեղի է ունեցել ստորգետնյա պայթյուն, որից հետո ուժեղ հրդեհ է բռնկվել: Իշխանությունները շտապ անվտանգ վայր են տարահանել մերձակա տների բնակիչներին եւ հյուրանոցներում գտնվող զբոսաշրջիկներին: Թայմս Սքվերի որոշ հատվածներում ասֆալտի վրա ճաքեր են առաջացել, իսկ դիտահորերից կրակի երկու մետրանոց բոցեր են դուրս եկել:

Դեպքի վայր են ժամանել ավելի քան 130 հրշեջ, ինչպես նաեւ գազի ծառայության եւ էլեկտրացանցի մասնագետներ:

Ականատեսների վկայությամբ՝ «փողոցը պայթել է ներսից»: Ըստ նախնական վարկածի՝ պայթյունի պատճառ է դարձել փողոցի տակով անցնող բարձրավոլտ մալուխների կարճ միացումը: Երեք ժամ անց հրշեջներին հաջողվել է մարել կրակը:

Թայմս Սքվերը Նյու Յորքի սիրտն է համարվում. այստեղ են գտնվում հայտնի թատրոնները, ռեստորանները, հեռուստաընկերությունները: Սովորաբար, երեկոյան ժամերին հրապարակում եւ մոտակա փողոցներում հավաքվում է մի քանի տասնյակ հազար զբոսաշրջիկ եւ քաղաքի բնակիչ:

Փրկվել են հրաշքով

Չինաստանի Շանսի նահանգում փրկարարները փլուզված հանքահորից դուրս են բերել 115 հանքափորի, որոնք ավելի քան մեկ շաբաթ մնացել են գետնի տակ՝ առանց լույսի, սննդի եւ ջրի: Փրկարարական աշխատանքներին մասնակցել է երեք հազար փրկարար:

Հրաշքով փրկված մարդկանց տեղափոխել են մոտակա հիվանդանոցներ: Ըստ բժիշկների՝ նրանց կյանքին վտանգ չի սպառնում:

Փլուզված հանքում զոհվել է 12 հանքափոր:

Սողանք Պերուում

Պերուի հյուսիս-արեւելքում հորդառատ անձրեւների հետեւանքով առաջացած սողանքների զոհ է դարձել 28 մարդ, 54-ը ստացել են տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ: Սողանքը փլուզել է շուրջ 120 բնակելի տուն:

Իրականացվում են որոնողափրկարարական աշխատանքներ:

Ֆաինա Թյունիբաբյան

արագ արձագանքման ծառայություններ

<<<

Մնացել էր ձորում

Ապրիլի 3-ին, ժամը 16.55-ին Վայոց ձորի Գողթանիկ գյուղից ահազանգ է ստացվել, որ Հերմոն գյուղին հարակից կիրճում գտնվող քաղաքացին ինքնուրույն չի կարողանում դուրս գալ եւ անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել մարզային փրկարարական վարչության փրկարար ջոկատը:

Ժամը 19.35-ին մոտ 80 մ խորությամբ կիրճից հատուկ տեխնիկայի օգնությամբ փրկարարները դուրս են բերել Հերմոն գյուղի բնակիչ՝ 1970 թ. ծնված Վ. Օհանյանին:

Ահազանգ Արմավիրից

Ապրիլի 6-ին «TIEARAS de Armenia» ընկերությունից տեղեկություն է ստացվել, որ ժամը 14.30-ին Արմավիրի մարզի Արեւադաշտ համայնքի՝ իրենց ընկերությանը պատկանող տարածքում աշխատող գյուղացիների կողմից հայտնաբերվել է արկի նմանվող առարկա:

Դեպքի մասին տեղյակ են պահվել ՀՀ ոստիկանությունը, ազգային անվտանգության ծառայությունը եւ պաշտպանության նախարարությունը:

Դեպքի վայր են մեկնել ՀՀ ՊՆ մասնագետների խումբը եւ Արմավիրի մարզային փրկարարական վարչության աշխատակիցները:

Ժամը 18.15-ին ՀՀ ՊՆ մասնագետների կողմից հայտնաբերված տեղից բարձրացվել է 122 մմ-ոց բեկորաֆուգասային արկ՝ առանց մարտական գլխիկի, որը հետագա վնասազերծման նպատակով տեղափոխվել է ՊՆ ինժեներական զորքերի վարչություն:

Շաբաթվա ընթացքում հանրապետության տարածքում արձանագրվել է տարաբնույթ հրդեհների 28 դեպք:

Հրդեհ ավտոմեքենայում

Ապրիլի 1-ին, ժամը 10.48-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Տավուշի մարզի Բերդավան գյուղին հարակից այգիների տարածքում:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ:

Հրդեհը մեկուսացվել է ժամը 11.03-ին, մարվել՝ ժամը 11.38-ին:

Այրվել է Ռ. Սարգսյանին պատկանող «ԳԱԶ-3110» մակնիշի «ԵՕՕ-911» պետհամարանիշի ավտոմեքենայի սրահը՝ ամբողջությամբ:

Գոհար Բաղդասարյան

սեյսմիկ պաշտպանություն

Ս. թ. ապրիլի 1-ից 7-ը ՍՊԱԾ-ի սեյսմիկ կայանները Հայաստանի տարածքում 3 բալ եւ ավելի ուժգնությամբ երկրաշարժ չեն գրանցել:

Տարածաշրջանում. 3 բալ եւ ավելի ուժգնությամբ տեղի է ունեցել հինգ երկրաշարժ: Ապրիլի 1-ին Թուրքիայի Թուտակ քաղաքից 26 կմ դեպի հյուսիս-արեւմուտք գրանցվել է 4 բալ ուժգնությամբ երկրաշարժ: Հաջորդ օրը Իրանում, Մերենդ քաղաքից 41 կմ դեպի արեւմուտք, տեղի է ունեցել 3 բալանոց սեյսմիկ ցնցում: Նույն ուժգնությամբ թույլ երկրաշարժեր են գրանցվել ապրիլի 4-ին Իրանի Խոյ քաղաքից 7 կմ դեպի հարավ-արեւելք, ապրիլի 5-ին՝ Թուրքիա-Իրան սահմանային գոտում, Չալդրան քաղաքից 18 կմ դեպի հյուսիս-արեւելք, եւ Վրաստան-Ադրբեջան սահմանային գոտում, վրացական Հիրսա քաղաքից 36 կմ դեպի հարավ-արեւելք:

Տարածաշրջանից դուրս. 6.0 եւ ավելի մագնիտուդով գրանցվել է երեք ուժեղ երկրաշարժ: Ապրիլի 4-ին Մեքսիկայի հյուսիսում՝ Մեքսիկալի քաղաքից 40 կմ դեպի հարավ-արեւելք, տեղի է ունեցել 7.0 մագնիտուդով ուժեղ երկրաշարժ, ինչի հետեւանքով զոհվել է 2 մարդ, վիրավորվել 233-ը, վնասվել են շինություններ, անջատվել է ջրամատակարարումն ու էլեկտրականությունը: Նշված տարածքում դեռ պահպանվում է սեյսմիկ ակտիվությունը: Հաջորդ ուժեղ սեյսմիկ իրադարձությունը, 6.2 մագնիտուդով, գրանցվել է ապրիլի 5-ին Մոլուքյան ծովում՝ Ինդոնեզիայի Սուլավեսի կղզու Մանադո քաղաքից 185 կմ դեպի հյուսիս: Ստորգետնյա ցնցումները զգացվել են քաղաքի բնակչության մի մասի կողմից: Ապրիլի 6-ին ինդոնեզական Սումատրա կղզու հյուսիսային ափամերձ գոտում տեղի է ունեցել ուժեղ երկրաշարժ, որն ունեցել է 7.7 մագնիտուդ: Կան տուժածներ, մասամբ վնասվել են շինություններ, ստորգետնյա ցնցումները զգացվել են կղզու հյուսիսային եւ կենտրոնական հատվածներում:

ՍՊԱԾ գործակալություն

Հաղորդում է ԼՂՀ Փրկարար ծառայությունը

Ապրիլի 1-ից 8-ը

Հրդեհներ

Ապրիլի 2-ին հրդեհ է բռնկվել Մարտակերտի շրջանի Հարությունագոմեր գյուղի բնակելի տներից մեկում: Դեպքի վայր է մեկնել Գետավանի հրշեջ ջոկի մարտական հաշվարկը: Հրդեհի արդյունքում տունն ամբողջությամբ այրվել է: Զոհեր եւ վիրավորներ չկան: Հրդեհի բռնկման պատճառը ճշտվում է:

Պատահար

Ապրիլի 4-ին Մարտունի - Նռնգի ճանապարհին տեղի է ունեցել մոտովթար, որի հետեւանքով Ա.Բ. Ավթանդիլյանը (ծնված 1963 թվականին, Գիշի գյուղի բնակիչ) եւ Պ.Պ. Ավթանդիլյանը (ծնված 1993 թվականին, Գիշի գյուղի բնակիչ) ստացել են տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ եւ տեղափոխվել հիվանդանոց:

* * *

Ապրիլի 7-ին, ժամը 16:50-ին Ստեփանակերտի Շինարարների 69 հասցեում «Ռեազ» մակնիշի ավտոմեքենան, կորցնելով ղեկի կառավարումը, դուրս է եկել ճանապարհի երթեւեկելի մասից եւ վրաերթի ենթարկել մայթով անցնող երեք կանանց: Դեպքի վայր մեկնած փրկարարները առաջին օգնություն են ցուցաբերել տուժածներ Ն. Ավանեսյանին (ծնվ. 1958 թ., Ստեփանակերտի բնակչուհի), Ռ. Բարսեղյանին (ծնվ. 1942 թ., Ստեփանակերտի բնակչուհի) եւ Ս. Բարսեղյանին (ծնվ. 1970 թ., Ստեփանակերտի բնակչուհի), որոնց տեղափոխել են Ստեփանակերտի հանրապետական հիվանդանոց: Բժիշկների գնահատմամբ, բոլոր տուժածների վիճակը ծանր է:

Ձենք-զինամթերք

Ապրիլի 3-ին Ասկերանի շրջանի Քյաթուկ գյուղի մոտակայքում հայտնաբերվել է բեկորային գնդիկավոր ավիառումբ: Վտանգավոր գտածոն ոչնչացվել է ԼՂՀ փրկարար ծառայության սակրավորների կողմից:

Փլուզում

Ապրիլի 6-ի առավոտյան Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շահումյանի շրջանի Չարեքտար գյուղի մոտակայքում տեղի է ունեցել ժայռաբեկորի փլուզում, որի հետեւանքով ավտոճանապարհը լցվել է քարերով եւ դարձել անանցանելի: «Արցախուղի» ՓԲԸ Շահումյանի մասնաճյուղի աշխատակիցների կողմից իրականացվել են ճանապարհամաքրման աշխատանքներ եւ երթեւեկությունը վերականգնվել է:

Առաջին հրշեջ - շարժասանդուղքը

1766 թ. ապրիլի 8-ին՝ 244 տարի առաջ, Ամերիկայի Միացյալ Նահանգներում պատենտավորվեց աշխարհում առաջին հրշեջ-շարժասանդուղքը: Այս հայտնագործության նշանակությունը դժվար է գերագնահատել, քանի որ մի անգամ չէ, որ այն մարդկային կյանքեր է փրկել:

Առաջին պատենտավորված շարժասանդուղքը 10 մ-ից մի քիչ պակաս էր, իսկ 1892թ. Ռուսաստան բերված առաջին շարժասանդուղքի բարձրությունն արդեն 27մ էր: Մեր օրերում, հրդեհաշիջման ժամանակ կիրառված շարժասանդուղքի ռեկորդային բարձրությունը 88 մ է եղել:

Ընդհանրապես, հրդեհաշիջման ժամանակ օգտագործվող աստիճանները երկու խմբի են բաժանվում. առաջինները նրանց համար են, ովքեր պայքարում են կրակի դեմ, այսինքն՝ հրշեջների, իսկ երկրորդ խմբի շարժասանդուղքները տուժածների համար են, այսինքն նրանց, ում փրկում են:

Պրոֆեսիոնալ հրշեջ-շարժասանդուղքները նախատեսված են հրշեջներին մի քանի հարկ վերեւ բարձրացնելու համար: Դրանք լինում են եռարմունկ, եւ ծալվում են, ինչպես ավտոմատ շարժասանդուղքները, որոնք ամրացվում են փրկարար մեքենայի կտուրին:

Այդպիսի ավտոսանդուղքները նախատեսված են մարդկանց բարձր հարկերի բռնկման օջախներից դուրս բերելու համար: Կառավարումն իրականացվում է հիմնական վահանակի, ինչպես նաեւ աստիճանի եզրին ամրացված «օրորոցի» վահանակի օգնությամբ:

Կարելի է վստահաբար ասել, որ հրշեջ-շարժասանդուղքի հայտնագործումը ոչ միայն հեշտացրել է հրշեջ-փրկարարների աշխատանքը, այլեւ օգնել է բազմաթիվ կյանքեր փրկել:

եղանակի տեսություն

Ապրիլի 1-7-ը դիտված հիդրոօդերեւութաբանական պայմանները ՀՀ-ում

Հանրապետությունում ապրիլի 1-ին եւ 2-ին առանձին շրջաններում, 3-ին եւ 4-ին՝ շրջանների մեծ մասում դիտվել են տեղումներ: Տեղումների քանակը կազմել է 7-12 մմ, առանձին շրջաններում՝ 15-19 մմ: Ապրիլի 4-ին առանձին լեռնային շրջաններում տեղումները դիտվել են ձյան տեսքով, որի հետեւանքով առաջացել է անկայուն ձնածածկույթ (Մասրիկ՝ 9 սմ, Մարտունի, Քաջարան՝ 4 սմ, Գավառ, Ջերմուկ՝ 3 սմ): Ապրիլի 5-6-ը դիտվել է առանց տեղումների եղանակ:

Օդի ջերմաստիճանը ապրիլի 1-ին, 4-ին, 5-ին եւ 6-ին ցածր է եղել նորմայից 1-3 աստիճանով, 2-ին, 3-ին եւ 7-ին՝ նույնքան բարձր:

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է Սյունիքի հովիտներում՝ +18... +23 ºC, Արարատյան դաշտում՝ +17... +21 ºC, Տավուշում՝ +16... +19 ºC, Լոռիում եւ Սյունիքի նախալեռներում՝ +15... +18 ºC, Արցախում՝ +13... +16 ºC, լեռնային շրջաններում՝ +10... +14 ºC:

Ամենացածր ջերմաստիճանը գրանցվել է լեռնային շրջաններում 0... -5 ºC (Մասրիկում՝ -10 ºC), Լոռիում, Սյունիքի նախալեռներում՝ 0... +3 ºC (Ստեփանավանում՝ -3 ºC), Արարատյան դաշտում, Տավուշում՝ -1... +4 ºC, Արցախում՝ +1... +4 ºC, Սյունիքի հովիտներում՝+4... +7 ºC:

Առաջիկա 5 օրվա եղանակի կանխատեսում

Հանրապետության տարածքում ապրիլի 9-ից 11-ը՝ առավելապես օրվա երկրորդ կեսին առանձին շրջաններում, 12-ին եւ 13-ին՝ շրջանների զգալի մասում, ժամանակ առ ժամանակ սպասվում է անձրեւ եւ ամպրոպ, ամպրոպի ժամանակ հնարավոր է քամու ուժգնացում՝ 13-18 մ/վրկ արագությամբ: Առանձին վայրերում հնարավոր է կարկուտ: Քամին՝ հարավարեւելյան՝ 2-7 մ/վրկ արագությամբ: Օդի ջերմաստիճանն էապես չի փոխվի:

Երեւանում ապրիլի 9-ից 11-ը առավելապես օրվա երկրորդ կեսին, 12-ին եւ 13-ին՝ ժամանակ առ ժամանակ սպասվում է անձրեւ եւ ամպրոպ, ամպրոպի ժամանակ՝ քամու ուժգնացում՝ 10-15 մ/վրկ:

Սպուգայց խոշոր մշակութային համալիրներում

Պետական հրդեհային տեսչությունը զգոն է

Թատրոններում տեղի ունեցած խոշոր հրդեհների առաջին հիշատակությունները թվագրվում են 1668 թվականով: Աշխարհի 1500-ից ավելի թատրոններ տուժել են հրդեհից, ընդ որում՝ կեսից ավելին՝ հիմնահատակ կործանվել: Վիճակագրական տվյալների համաձայն՝ 18-20-րդ դարերում մշակութային օբյեկտներում տեղի ունեցած հրդեհները խլել են 12,5 հազար մարդու կյանք:

Մարդկանց զանգվածային ներկայությամբ օբյեկտների հրդեհային անվտանգությունն ուժեղացնելու, հրդեհների կանխարգելման համար ԱԻՆ պետական հրդեհային հսկողություն իրականացնող աշխատակիցները մշտապես ուշադրության կենտրոնում են պահում հրդեհի բռնկման հնարավոր աղբյուրների վերացման, հրդեհի դեպքում մարդկանց անվտանգ տարահանումն ապահովող պայմանների ստեղծման եւ հասարակական վայրերի աշխատակիցների հրդեհային անվտանգության կանոնների ուսուցանումը կազմակերպելու գործը:

ԱԻՆ նախարար Արմեն Երիցյանի հարձնարարությամբ, այս շաբաթ Հրդեհային անվտանգության պետական տեսչության աշխատակիցները հետազոտություններ իրականացրեցին Երեւան քաղաքի հասարակական վարերից մի քանիսում, ուր շատ է մարդկանց հոսքը՝ Օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոն, Մարզահամերգային համալիր, Մատենադարան եւ Ազգային պատկերասրահ:

Սկզբում տեսուչներն այցելեցին Մատենադարան, որտեղ պահվող միջանադարյան մատյանները համաշխարհային մշակույթի անբաժանելի մասն են, եւ չափազանց կարեւոր է դրանց անվտանգության ապահովումը: Սկզբում նրանք մտան Մատենադարանի այն սենյակը, ուր տեղադրված է հրդեհաշիջման ինքնաշխատ համակարգը:

- Ձեր ուշադրությունը ուզում եմ հրավիրել այստեղ կուսակված զանազան վառողունակ իրերին, մասնավորապես՝ գրքեր, արկղեր, որոնք չի թույլատրվում կուսակել այստեղ: Դրանք պետք է դուրս բերվեն եւ համապատասխան վայրերում կուսակվեն: Հիմա մենք մտնելու ենք հրդեհաշիջման ինքնաշխատ համակարգերի սենյակ, որն առայժմ չի գործում,- ասում է ԱԻՆ ՀՓԾ ՊՀՏ քարոզչության բաժնի պետ Սերգեյ Հայրապետյանը:

Մանագետները նշում են, որ եթե այս գազային հրդեհաշիջման ինքնաշխատ համակարգն աշխատեր, ապա Մատենադարանի հակահրդեհային անվտանգությունն ավելի ապահովված կլիներ: Մատենադարանում ներքին հակահրդեհային հին ջրացանցը չնայած փոխարինվել է նորով, բայց ունի թերություններ:

Սերգեյ Հայրապետյանն ասում է, որ նոր հակահրդեհային ներքին ջրացանցի ջրատար խողովակաշարը մոնտաժված է վերելակի անմիջական հարեւանությամբ եւ բարձրանում է մինչեւ վերեւի հարկերը:

- Որպես թերություն պետք է նշեմ, որ սրանք կահավորված չեն համապատասխան հակահրդեհային գույքով, մասնավորապես, փողրակներով եւ դրանք տեղադրված չեն համապատասխան արկղերի մեջ, - ներկայացրեց նա:



Սակայն սա դեռ ամենը չէ: Մասնագետները, որպես հակահրդեհային թերություն նշում են նաեւ տարահանման ուղիները՝ ելքի դռները, որոնք պետք է բացվեն շենքից դեպի դուրս շարժմանը համընթաց, բայց հիմա ճիշտ հակառակն են բացվում: Պատին փակցված այս ազդարարիչ սարքն էլ չի գործում, քանի որ չգործող հրդեհաշիջման ինքնաշխատ համակարգի մի մասն է: Իսկ մյուս սենյակում տեղադրված են հրհեհաշիջման եւ հրդեհ ազդարարող ինքնաշխատ համակարգերի ղեկավարման վահանակները:

Պետական հրդեհային տեսչության աշխատակիցը ցանկություն հայտնեց փորձարկել հրդեհ ազդարարող համակարգը, սակայն պարզվեց, որ նույնիսկ նրան այնտեղ մտնել եւ համակարգը փորձարկել չի կարելի:

Հովհաննես Սարգսյանը, որը ԱԻՆ ՀՓԾ ՊՀՏ տարածքային ստորաբաժանումների գործունեությունը համակարգող բաժնի պետն է, պահանջեց.

- Ես որպես հրդեհային տեսչության աշխատակից, ցանկանում եմ փորձարկել հրդեհ ազդարարող համակարգը: Մենք տվիչին կմոտենանք, ծխախոտի ծուխը տանք եւ կտեսնենք՝ համակարգն աշխատու՞մ է, թե՞ ոչ:

Մատենադարանի փոխտնօրեն Էդիկ Դանիելյանը, որն ուղեկցում էր տեսուչներին, սակայն, հակադարձեց, որ տվիչի ստույգ տեղը հայտնի չէ, եւ ինչ որ պետք է աշխատի՝ աշխատում է:

- Ամերիկյան սիստեմի է, սա ամերիկացիներն են դրել 15-20 տարի առաջ: Շարից դուրս է եկել, փող չկա, ամերիկացիները մեզ փող չեն տալիս: Ասինքն, հովանավորը չի ուղարկում դեսալներ, որ դնես, աշխատի:

Հրդեհային տեսչության աշխատակիցը փորձում էր համոզել, որ այս երկու համակարգերը իրար հետ փոխկապակցված պետք է աշխատեն, եւ միայն հրդեհ ազդարարող համակարգի աշխատանքը լիարժեք չի կարող համարվել, քանի որ չի գործում «15-20 տարի առաջ տեղադրված հրդեհաշիջման համակարգը»:

ԱԻՆ ՀՓԾ ՊՀՏ տարածքային ստորաբաժանումների գործունեություն համակարգող բաժնի պետ Հովհաննես Սարգսյանը նշեց,

- Այս սարքավորումներն այժմ մեծ ծուխ տալի ջարդոնի են վերածվել եւ նոպատակին չեն ծառայում:

Պետական հրդեհային տեսչության աշխատակիցների կողմից տնօրինությանը ներկայացվեց կարգադրագիր, ուր նշված են բոլոր թերությունները, որոնք պետք է վերացնել:

Տեսուչների հաջորդ այցը Հայաստանի ազգային պատկերասրահ էր: Ինչպես Մատենադարանում, այնպես էլ այստեղ հակահրդեհային անվտանգության վերահսկողությունն իրականացնում են ԱԻՆ ՀՓԾ փրկարար ուժերի վարչության կարեւորագույն օբյեկտների պահպանության բաժնի հրշեջ-հրահանգիչները: Լինսի հիմնադրամի ներդումների հաշվին տեղադրված ավտոմատ հրդեհաշիջման համակարգը, որը գործում է ածխաթթու գազով եւ ապահովում պահոցների անվտանգությունը, ի տարբերություն Մատենադարանի, նորմալ է գործում: Բացի հիմնական մասնաշենքից, կազմվել են նաեւ հանրապետության մարզերում գործող 13 մասնաճյուղերի տարհանման սխեմաները: Պատկերասրահի բակում կան նաեւ հիդրանտներ, որոնք նախատեսված են հրշեջ մեքենաները ջրով լիցքավորելու համար: Իսկ սրահներում գործում է ահազանգող համակարգ: Չնայած այս ամենին, կան խնդիրներ, որոնք լուծման կարիք ունեն:

Հայաստանի ազգային պատկերասրահի տնտեսական գծով փոխտնօրեն Լեւոն Հովհաննիսյանը ներկայացրեց.

- Լինսի հիմնադրամով վերանորոգելուց հետո, տվյալ համակարգը մոնտաժվել է, տեղադրվել է, բայց մինչ օրս մենք չունենք համապատասխան համակարգը սպասարկող մասնագետներ:

Պատկերասրահի տնօրինությունը պատրաստվում է դիմել ԱԻ նախարարին՝ շենքը ավտոմատ հրդեհաշիջման համակարգը սպասարկող մասնագետներով ապահովելու համար:

Մյուս այցը Սպենդիարյանի անվան Օպերայի եւ Բալետի ազգային ակադեմիական թատրոն էր, որի դահլիճում մոնտաժված էին ահազանգող եւ ջրով աշխատող հրդեհաշիջման ինքնաշխատ համակարգ: Երկուսն էլ սարքին վիճակում էին: Նորմալ գործում էր նաեւ բեմի հակահրդեհային վարագույրը: Մոտ 10 սանտիմետր հաստությամբ այս վարագույրը հրդեհի դեպքում իջնում է եւ առանձնացնում բեմը դահլիճից: Սակայն այստեղ էլ մասնագետները բացթողումներ տեսան:

Սերգեյ Հայրապետյանը, նշեց, օրինակ, որ ներքին հրշեջ ծորակներից ոչ բոլորն են կահավորված համապատասխան հրշեջ գույքով, մասնավորապես՝ փողրակներով: Կային հրդեհաշիջման սկզբնական միջոցները՝ կրակմարիչները, դրանցից իհարկե ոմանք ժամկետանց էին, բայց հիմանականում գտնվում էին աշխատունակ վիճակում: Ընդհանուր առմամբ վիճակը կարելի է գնահատել բարվոք:

Եթե Օպերայի եւ բալետի ակադեմիական թատրոնի հակահրդեհային անվտանգությունը մասնագետները գնահատում են բարվոք, ապա Մարզահամերգային համալիրում նույն մասնագետների կարծիքով վիճակը գերազանց է, չնայած, որ հրդեհային անվտանգության համակարգերի մոնտաժային աշխատանքները դեռ ավարտված չեն: Այստեղ, ի տարբերություն նախորդների, սեփականատերերն ունեն հրդեհային անվտանգության իրենց աշխատակիցները:

Մարզահամերգային համալիրի տնօրենի պաշտոնակատար Վահագ Գեւորգյանն ասաց.

- Մենք ունենք մեր սպասարկող անձնակազմը եւ հակահրդեհային ջրային տնտեսություն: Անձնակազմը պատասխանատու է հակահրդեհային վիճակի համար շենքում, համերգների ժամանակ: Դրանից կարեւոր բան չկա, որովհետեւ, Աստված չանի, մի բան պատահի, էդ-ման մարդկանց կյանքի համար պատասխանատու ենք:

Անվտանգության եւ հակահրդեհային համակարգն ամբողջովին փոխելու ու նորը տեղադրելու համար արդեն մոտ կես միլիոն դոլար է ծախսվել, որը կազմում է ամբողջ շինարարության վրա ծախսված ընդհանուր գումարի մոտ 10 տոկոսը միայն:

Մշակութային օջախներում տեղի ունեցած հրեհների տխուր վիճակագրությունը ցույց է տալիս, որ թատրոնների հրդեհները մարելը շատ բարդ գործ է: Շինություններին հասցված նյութական վնասի, դրանք վերականգնելու վրա ծախսած լրացուցիչ գումարների մասին էլ կարելի է երկար խոսել, բայց ամենակարեւորը հրդեհի բռնկման հնարավոր աղբյուրների առաջացումը վերացնելն ու զգոնությունը պահպանելն է:

Արմինե Գրիգորյան

Փրկարարները միայն տղամարդիկ չեն կամ շնորհավոր ապրիլի 7

<<< 1

Այն, որ Վիկտորիան փրկարար դարձավ, ընտանիքում ոչ ոքի չզարմացրեց: Տղամարդկային ծանր ու դժվար մասնագիտությունների նկատմամբ նա մանկուց էլ սեր է ունեցել, նույնիսկ որոշել էր խաղաղապահ զորքեր մտնել ու Իսրայել գնալ: Այնպես որ, այդքանից հետո նրա փրկարար դառնալը ծնողներին նույնիսկ ավելի թեթեւ բան թվաց: Երբ Վիկտորիան աշխատանքի է լինում, տնեցիները չեն անհանգստանում:

- Ես շատ հանգիստ եմ, որովհետեւ գիտեմ՝ ինքը ցանկացած բարդ իրավիճակից էլ ելք կգտնի, - ասում է Վիկտորիայի մայրը՝ Թերեզա Ասատրյանը, *- հետո նաեւ վստահում են այն տղաներին, որոնք աշխատում են իր հետ:*

Երբ փոքր էր, Վիկտորիան աղջիկ ընկերներ չուներ, փոխարենը նրա շրջապատում միշտ տղաներ էին, ովքեր դժվար պահերին միշտ իրենց աղջիկ ընկերոջն էին օգնության կանչում:

- Տղաները երբ բակում կռիվ էին անում, միշտ Վիկտորիային էին կանչում, տանում իրենց հետ, նույնը նաեւ դպրոցում էր: Նա սպորտով է զբաղվել, կարատեով, թեթեւ ատլետիկայով, - պատմում է մայրը, *- երբ 3 տարեկան էր, հարցնում էր՝ ինձ ե՞րբ են բանակ տանելու, այնքան հարցրեց, որ ասացի՝ աղջիկ ջան, քեզ ընդմիշտ ազատել ենք բանակից: Տխրեց, լաց եղավ:*

Վտանգավոր իրավիճակներից չվախենալն ու տղամարդկային համարձակություն ունենալը Վիկտորիայի ընտանիքի կանանց մեջ կարծես գեներով է անցնում: Տատիկը Հայրենական մեծ պատերազմի մասնակից-վետերան է, իսկ մայրը՝ որպես լրագրող լուսաբանել է Արցախյան պատերազմը հենց կռվի դաշտից, իսկ հետո սկսել է բարեգործությամբ զբաղվել:

- Որքան էլ տարօրինակ է, երբ իմ աղջիկները 3-4 տարեկան էին, ես իրենց հետս տարել եմ Արցախ՝ ռազմի դաշտ: Այդ ժամանակ հագուստ ու դեղորայք էի տանում այնտեղ, ու աղջիկներիս էլ միշտ հետս վերցրել եմ, - պատմում է Թերեզա Ասատրյանը:

Փրկարարությունից Վիտորիան երբեք չի հրաժարվելու: Ապագա ամուսնու մասնագիտության առումով հատուկ նախընտրություններ չունի ու համոզված է, որ ամուսինը չի արգելելու նրան լինել փրկարար:

- Ինչպես կարող է չթողնել, որ աշխատեմ: Նախ ինքը հենց սկզբից ինչ է չի՞ իմանալու, որ փրկարար եմ: Պիտի ընդունի ինձ այնպիսին, ինչպիսին կամ, - ասում է Վիկտորիան:

Որքան էլ այս կանայք դժվար, վտանգավոր եւ տղամարդկային գործերով զբաղվեն, միեւնույն է, երբեք չեն կորցնում իրենց կանացիությունն ու հմայքը, իսկ տղամարդիկ, որքան էլ բողոքեն ու թերահավատորեն մոտենան, միեւնույն է, պետք է խոստովանեն, որ առանց կին գործընկերների իրենց աշխատանքն էլ հետաքրքիր չէր լինի:

Անի Ստեփանյան

1-01 հրշեջ ծառայություն

Հրդեհներ հյուրանոցներում

Անհրաժեշտ հետեւություններ չեն արվում

Սկիզբը՝ նախորդ համարներում

Հարավային Կորեայի մայրաքաղաք Սեուլի «Դայ-Յուն-Կակ» հյուրանոցում 1971 թվականի դեկտեմբերի 25-ին նշվում էր Սուրբ Ծննդյան տոնը: Վաղ առավոտից մարդիկ շտապում էին հյուրանոց՝ ակնկալելով ուրախ եւ հաճելի ժամանց: Սպասարկող անձնակազմը խստորեն հետեւում էր, որ կողմնակի անձինք մուտք չգործեն, այդ իսկ պատճառով փակել էր բոլոր պահեստային ելքերը, եւ հյուրերը ներս էին մտնում միայն մեկ դռնից: Շենքում տեղակայված էին նաեւ տարբեր ֆիրմաների գրասենյակներ: Այն ուներ 2 ներքին սանդղավանդակ, սարքավորված էր հրդեհի ահազանգման ինքնաշխատ համակարգով եւ ներքին հակահրդեհային ջրացանցով:

Ժամը 10-ի սահմաններում 13-րդ հարկում գտնվող ռեստորանում արդեն 300-ից ավելի մարդ էր հավաքվել, նույնքան էլ՝ սրճարաններում եւ հյուրանոցի համարներում: Այդ ժամանակ 2-րդ հարկում գտնվող սրճարանում, հեղուկացված գազով՝ պրոպանով լցված բալոնի անսարքության պատճառով տեղի ունեցավ գազի արտահոսք եւ բռնկում (բռնկման պատճառը մնաց չպարզված): Կրակն արագորեն տարածվեց եւ' ուղղահայաց եւ' հորիզոնական ուղղություններով, ինչին նպաստեցին տարբեր դյուրավառ նյութերը, որոնցով հարդարված էին կախովի առաստաղները, սենյակների, միջանցքների պատերը, միջնորմները: Մինչեւ 3-րդ հարկ սանդղավանդակները բաց էին, իսկ կախովի առաստաղների վերեւում անցքեր էին բացված՝ հաղորդակցության (կոմունիկացիոն) միջոցների անցկացման համար: Բռնկվեցին միջանցքների սինթետիկ գորգերն ու վառունակ երեսպատումները: Խեղդող ծուխը տարածվեց դեպի աստիճանավանդակներն ու վերելակների հորանները: Շենքում նախատեսված չէր հակածխային պաշտպանություն, ինչի հետեւանքով հարկերն արագորեն պարուրվեցին թանձր ծխով եւ թունավոր գազերով: Կրակն անարգել տարածվեց օդափոխման եւ օդի լավորակման համակարգերով: Որոշ ժամանակ անց ծուխը լցվեց ռեստորան՝ առաջացնելով խուճապ: Հիմնական աստիճանավանդակը ծխապատված էր, իսկ պահեստային ելքերը՝ փակ: Մարդիկ նետվում էին դեպի վերելակները՝ հուսալով արագորեն իջնել ներքեւ, սակայն էլեկտրամատակարարման խափանման պատճառով դրանք լռվել էին հարկերի արանքում:

Շուտով հյուրանոցի բոլոր 22 հարկերը պարփակվեցին կրակե

օղակով: Վերեւի հարկերում գտնվողները կտրված էին տարահանման ուղիներից, բարձրացել էին լուսամուտագոգերի վրա եւ օգնություն էին կանչում: Ոմանք, սարսափից խելագարված, պատուհաններից նետվում էին ցած: Շատերը խեղդվեցին համարներում, այրվեցին վերելակներում:

Սեուլի ամբողջ հրշեջ տեխնիկան եւ անձնակազմը, ոստիկաններ, զինվորներ՝ շուրջ 2000 մարդ, 12 ժամ պայքարում էին ամենակուլ տարերքի դեմ: Հրդեհաշիջման աշխատանքների առաջին փուլում որպես տարահանման ուղիներ օգտագործվում էին սանդղավանդակներն ու վերելակները, բայց էլեկտրաէներգիայի անջատվելուց եւ վերելակների շարքից դուրս գալուց հետո մարդկանց տարահանումն իրականացվում էր հրշեջ ավտոսանդուղքների եւ ուղղաթիռների միջոցով: Շենքի ներքեւի 8 հարկերից հաջողվեց փրկել հարյուրից ավելի մարդ, իսկ վերեւի հարկերում գտնվող մարդկանց հրշեջներն ի վիճակի չէին օգնել, քանի որ հրշեջ ավտոսանդուղքները չէին հասնում մինչեւ 9-րդ հարկ, իսկ շենք մտնելու հնարավորություն չկար: Վերին հարկերում գտնվողները, սավանից պարան պատրաստելով, փորձում էին իջնել ներքեւ եւ հասնել ավտոսանդուղքներին: Մարդկանց մի մեծ խումբ, փորձելով փրկվել կրակից եւ ծխից, բարձրացել էր հյուրանոցի հարթ տանիք, սակայն չկային արտաքին հրշեջ ստացիոնար սանդուղքներ, իսկ տանիքը հարմարեցված չէր ուղղաթիռների վայրէջքի համար: Բացի դրանից՝ ծխի քուլաները եւ ջերմային հոսանքները թույլ չէին տալիս մոտենալ տանիքին: Շատ քչերին հաջողվեց փրկել այդ ճանապարհով, քանի որ ոչ բոլորն էին ընդունակ դիմանալու գլխապտույտ թռիչքին՝ ուղղաթիռից նետված պարանի ծայրից կախված:

Հրդեհի հետեւանքով զոհվեց 163 մարդ, որոնցից 38-ը ջախջախվել էին՝ դուրս նետվելով պատուհաններից, եւս 64-ը ստացան տարբեր աստիճանների այրվածքներ եւ թունավորումներ, շենքն ամբողջությամբ շարքից դուրս եկավ: Հրդեհը տեւել էր շուրջ 12 ժամ, մոտ 2 ժամ էլ հրշեջները չէին կարողացել ստուգել շենքը եւ դուրս բերել զոհերին, քանի որ երկաթբետոնյա կառուցատարրերի գերշիկացման հետեւանքով շենքում հաստատվել էր չափազանց բարձր ջերմաստիճան: Հրդեհից տուժած հյուրանոցների երկար շարքում Սեուլինն անվերապահորեն զբաղեցնում է առաջին տեղը: Հետեւանքների ծանրության առումով նրա հետ կարող է «մրցել» թերեւս միայն ամերիկյան «Ատլանտա» հյուրանոցը, որտեղ տեղի ունեցած հրդեհի ժամանակ զոհվեց 119 մարդ:

Հրդեհի հանգամանքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, թե որոնք էին այդչափ աղետալի հետեւանքի պատճառները: Նախ, տարահանման ճանապարհների հարդարման համար օգտագործվել էին վառունակ նյութեր, ինչն անթույլատրելի է հանրային նշանակության, մարդկանց զանգվածային ներկայությամբ օբյեկտներում: Հյուրանոցում սարքավորված չէր հրդեհի ազդարարման ինքնաշխատ համակարգ, բացակայում էր հրդեհաշիջման սպրինկլերային համակարգը: Սպասարկող անձնակազմը պատրաստված չէր նման արտակարգ իրավիճակներում գործելու, շփոթվել էր, չէր բացել պահեստային ելքերը, մարդկանց ցույց չէր տվել տարահանման ուղիները, թույլ էր տվել օգտվել վերելակներից: Հյուրանոցում չէր պահպանվել հակահրդեհային կենսակարգը: Բացի դրանից, Սեուլի հրշեջները պատշաճ ձեւով նախապատրաստված չէին բարձրահարկ շենքերում հրդեհաշիջման աշխատանքներ իրականացնելուն: Այս ամենն էլ ավելի էր բարդացրել առանց այն էլ ծանր իրավիճակը եւ հանգեցրել ողբերգական հետեւանքների:

Այստեղ տեղին է նշել նաեւ, որ մարդկանց զանգվածային ներկայությամբ հասարակական շենքերում (հյուրանոցներ, ռեստորաններ, հանրախանութներ, առողջապահական կազմակերպություններ եւ այլն) առանձնակի վտանգավորություն է ներկայացնում եւ անթույլատրելի է կենցաղային նպատակների համար հեղուկացված գազով գազաբալոնային սարքավորումների օգտագործումը: Նշված բնույթի շենքերն իրենց տեխնիկական կառուցվածքային առանձնահատկություններով՝ հարկայնությամբ, օդափոխության համակարգի հնարավորություններով եւ մի շարք այլ պարամետրերով, բացառում են վերոհիշյալ սարքերի օգտագործումը: Հատկապես վտանգավոր է բնակելի հասարակական շենքերի նկուղային կամ ցոկոլային հարկերում գործող առեւտրի ու հանրային սննդի պատրաստման օբյեկտներում գազաբալոնների տեղադրումը եւ շահագործումը: Դրանով անմիջական սպառնալիքի տակ է դրվում ամբողջ շենքի ու մարդկանց անվտանգությունը:

Իհարկե, հյուրանոցներում տեղի ունեցած աղետալի հրդեհների լուրը տարածվում էր աշխարհով մեկ, սակայն շատ քչերն էին անհրաժեշտ հետեւություններ անում՝ շարունակելով երկրորդական դեր հատկացնել հրդեհային անվտանգության հարցերին: Եվ կրակե արհավիրքը շարունակում էր պատժել մարդկանց՝ իրենց անհոգության ու անտարբերության համար: Ոչ ամբողջական վիճակագրական տվյալների համաձայն, միայն վերջին 50 տարվա ընթացքում հյուրանոցներում տեղի ունեցած հրդեհները խլել են 2 հազարից ավելի մարդու կյանք: Համառոտ ներկայացնենք տխուր վիճակագրության չորթվերը. նորվեգական Հարդանգեր քաղաքի «Շտալհայմ» հյուրանոց, 1959 թվական՝ 30 զոհ, 1963 թվական, «Ատլանտիկ Սիթի» (ԱՄՆ)՝ 26 զոհ, 1971 թվական, Բանգկոկի «Իմպերիալ» հյուրանոց՝ 24 զոհ, 1973 թվական, Կոպենհագենի «Հաֆնիա» հյուրանոց՝ 34 զոհ, 1977 թվական, Ամստերդամի «Պոլշա» հյուրանոց՝ 33 զոհ, Մանիլայի «Ֆիլիպինաս» հյուրանոց՝ 63 զոհ, Մոսկվայի «Ռոսիա» հյուրանոց՝ 44 զոհ, 1978 թվական, Բորասի (Շվեդիա) «Շտադս Հոթել»՝ 20 զոհ, 1979 թվական, Սարագոսայի «Կորոնա դե Արագոն» հյուրանոց՝ 72 զոհ, 1980 թվական, Լաս Վեգասի «Գրանդ հոթել»՝ 83 զոհ, 1991 թվական, Լենինգրադի «Լենինգրադ» հյուրանոց՝ 27 զոհ:

Հրշեջ փորձագետները, վերլուծելով նմանօրինակ աղետալի հրդեհների առաջացման պատճառները, եկել են այն եզրակացության, որ դրանք հիմնականում հրդեհային անվտանգության կանոնների տարրական պահանջների անտեսումն են: Իսկ մարդկանց զանգվածաբար զոհվելուն նպաստել են վարչակազմի անգործությունն ու անփութությունը, սխալ գործողությունները, արտակարգ իրավիճակներում գործելու անկարողությունն ու խուճապը:

Շարունակելի

Սերգեյ Հայրապետյան
ՀՀ ԱԻՆ ՀՓԾ ՊՀՏ
ՀՀՎՀՔ բաժնի պետ

Ահազանգի հեպքերով

Մեր թերթի նախորդ համարում անդրադարձել էինք ԱԻ նախարարի անմիջական հսկողության տակ գործող թեժ գծով ստացված ահազանգերից մեկին: Խոսքը Կիեւյան 14 ա հասցեում կառուցվող 16 հարկանի բազմաբնակարան շենքի շինհրապարակում տեղադրված ամբարձիչ աշտարակային կռունկի մասին է: Այն տեղադրվել էր առանց ԱԻՆ տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնի փորձագիտական դրական եզրակացության: Չնայած փորձագետները կասեցրեցին կռունկի մոնտաժային աշխատանքները, որին հետեւեց նաեւ կռունկի շահագործման արգելման մասին ԱԻ նախարարի կարգադրագիրը, սակայն շինհրապարակի հարեւանությամբ ապրող բնակիչները նորից ահազանգեցին: Այս անգամ նրանք տեղեկացրեցին, որ կառուցապատում իրականացնող «Հոյակերտ» շինարական կազմակերպությունը մոտ տասը մետրով բարձրացրել է կռունկի աշտարակը: ԱԻՆ Տեխանվտանգության փորձագետները նորից այցելեցին Կիեւյան 14 ա հասցեի շինհրապարակ եւ շինարական կազմակերպության տնօրենին հանձնեցին արտադրական վտանգավոր օբյեկտի՝ կռունկի շահագործման արգելման մասին ԱԻ նախարարի կարգադրագիրը, կրկին անգամ հորդորելով զերծ մնալ կռունկի հետագա մոնտաժային աշխատանքներ իրականացնելուց:

Իսկ ուրբաթ օրը Արտակարգ իրավիճակների նախարարությունում տեղի է ունենալու վարչական վարույթ իրականացնող հանձնաժողովի նիստ, ուր քննարկվելու է նաեւ «Հոյակերտ» ՍՊԸ շինարարական կազմակերպության կողմից օրենքի խախտման հետեւանքով տուգանքի նշանակման հարցը: Նիստին կմասնակցի նաեւ շինարարական կազմակերպության տնօրենը:

աղետի դասերը

Ուղերձ Հանսին-Ավաձիից

Այսօր արդեն շատերը գիտեն, որ Ճապոնիան սեյսմավտանգ գոտում է, եւ այստեղ հաճախ են ավերիչ երկրաշարժեր լինում: Ճապոնացիները, սակայն, սովորել են հաշտ ապրել տարերքի հետ: Աշխարհին տեխնոլոգիական հրաշքներով զարմացնող այս երկիրը եւս մի ուսանելի ոլորտ է բացահայտել՝ սեյսմակայուն շինարարություն:

Այս տարվա՝ Հայիթիի եւ Չիլիի կործանարար երկրաշարժերը եւս մի հիշեցում են, որ անփութությունը շինարարության ոլորտում պատժելի է: Մենք կարող ենք դա հաստատել, մենք դրա ականատեսն ենք եղել 88-ին՝ Սպիտակում: Իսկ որ իրազեկվածությունը եւս կարող է կյանքեր փրկել, նույնպես յուրացրել ենք:

Ձեզ ենք ներկայացնում ճապոնական Հանսին-Ավաձի քաղաքի 2005 թ. հունվարին տեղի ունեցած ուժեղ երկրաշարժից քաղված դասերի ժողովածուն, որ մեզ են տրամադրել մեր ճապոնացի գործընկերները: Մասնագետների կողմից՝ այդ երկրաշարժի հետեւանքների ու հետագա իրադարձությունների մանրակրկիտ հետազոտման ու մշակման արդյունքում ստեղծված այս ձեռնարկը, կարծում ենք, օգտակար կլինի բոլորի համար:

Սկիզբը՝ նախորդ համարներում

Դասեր. անհետաձգելի օգնությունից մինչեւ վերականգնում

15. Շփումները մարդկանց միջեւ եւ առնչումը մշակույթին ամրացնում է ապրելու ուժը:

Հանսին - Ավաձիի՝ երկրաշարժից տուժած տարածքում «Չհանձնվես Կոբե» կարգախոսի եւ ողջունող արշավների, առողջ ապրելակերպի ուսուցման, մշակութային գործունեության մեջ ներգրավման եւ սպորտով զբաղվելու, ինչպես նաեւ երկրաշարժից հետո «Կոբե լյումինարիե» ձմեռային փառատոնի անցկացման շնորհիվ, տուժածներից յուրաքանչյուրը վերականգնվելու ուժ ստացավ եւ կարողացավ դիմակայել բոլոր դժվարություններին: Նաեւ՝ որպեսզի մարդիկ, կյանքի պայմանների փոփոխության պատճառով, չամփոփվեն իրենք իրենց մեջ, հրավիրվեցին առողջ ապրելակերպի հիմունքների ուսուցման, մշակութային գործունեությամբ եւ սպորտով զբաղվելու:

Շփումները մարդկանց միջեւ եւ առնչումը մշակույթին ամրացնում է տուժածների ապրելու ուժը, դրդում վերականգնման: Այս ամենը բանալի է՝ նորմալ կյանքի վերադառնալու համար:

16. Համայնքներում ի հայտ եկան կյանքի նոր ոճ եւ գործարարություն:

Հանսին - Ավաձիի երկրաշարժից հետո, համայնքը կազմակերպելու եւ պահպանելու նպատակով, ներդրվեց «Քոլեքթիվ հաուզինգ»՝ «Տուն-հանրակացարան» համակարգը: Ինչպես նաեւ այն հաստատությունների համար, որոնք տրամադրում են «Գրուփ հոում» («աղետից հետո նորմալ կյանքի վերադառնալու հանրակացարան»), որտեղ մշտապես օգնող աշխատակից է բնակվում, ֆինանսական միջոցներ հատկացվեցին վերականգնման ֆոնդից: Բացի դրանից, Հանսին - Ավաձիի երկրաշարժից հետո, տեղական բնակչությունը տարբեր ոլորտներում նոր՝ համայնքային բիզնես սկսեց, որը սերտորեն կապված էր տվյալ շրջանի հետ: Բիզնեսի նման տեսակը գլխավորապես ուղղված էր տեղացիների կողմից տեղական խնդիրների լուծմանը, այդ պատճառով էլ սպասվում էր, որ այն կնպաստի տեղական համայնքի կազմակերպմանը, աշխատատեղերի ստեղծմանը եւ շրջանային տնտեսության զարգացմանը:

Կարեւոր է, որ նման որոշումը, որը հայտնվել էր Հանսին - Ավաձիի երկրաշարժից հետո, ամրապնդվեց կյանքի կամ աշխատանքի բազմաբնույթ ոճերի առկայության պայմաններում: Ծերացող եւ քիչ երեխաներ ունեցող հասարակության համար կարեւոր է կյանքի եւ աշխատանքի այնպիսի ոճ որդեգրել, որն ուղղված է տվյալ տարածքում բնակվող մարդկանց միջեւ կապերի պահպանմանը:

17. Կարեւոր է ձգտել աղետից հետո վերամշակել աղբը:

Հանսին - Ավաձիի երկրաշարժից տուժած շրջանում, բացի փլատակների մեծ քանակության գոյացումը, դեն էին նետվել նաեւ շատ անպետք իրեր կամ կահույք՝ կապված ժամանակավոր տներ տեղափոխվելու հետ: Այդ ամենը հավաքելու համար մեծ քանակությամբ միջոցներ եւ ժամանակ պահանջվեց:

Նկատվեց, որ թեեւ արագ վերականգնման նպատակով

պետական միջոցներով քանդվել ու մաքրվել են փլուզված տները, դրա հետ միասին քանդվել են նաեւ վերանորոգման ենթակա շինությունները:

Մյուս կողմից էլ, կամավորները, որոնք հյուսնի եւ կահույք վերանորոգողի հմտություններ ունեին, խրախուսում էին վերամշակումը, ինչը, պարզվեց, շատ արդյունավետ է՝ աղետից հետո թափոնների քանակը նվազեցնելու համար:

Նաեւ ժամանակավոր տները, որոնք կառուցվել էին Հանսին - Ավաձիում՝ երկրաշարժից հետո, եւ որոնք կարելի էր եւս մեկ անգամ օգտագործել, տրամադրվեցին Թուրքիայում եւ Թայվանում տուժածներին:

Վերջին տարիներին հետաքրքրություն է առաջացել վերամշակման հանդեպ, եւ ընդունվել է թափոնների վերամշակման մասին օրենք, պարտադիր է դարձել տների տեսակավորումն ու տարբերակումը: Նաեւ ընդունվել են վերամշակման մասին տարբեր օրենքներ, օրինակ՝ կենցաղային տեխնիկայի վերամշակման մասին օրենքը: Մենք պետք է ջանանք առօրյա կյանքում չծանրաբեռնել շրջակա միջավայրը, նաեւ կարեւոր է, հնարավորության դեպքում, աղետից հետո նվազեցնել թափոնների քանակը:

18. Տուժածների մասին հոգ տանելու եւ ապրելու ցանկությունը վերականգնելու համար անհրաժեշտ է բնակիչների կամավոր համագործակցությունը:

Հանսին - Ավաձիի երկրաշարժից հետո կյանքի պայմանների եւ մարդկանց հարաբերությունների հանկարծակի փոփոխության պատճառով մեծացավ այն տուժածների թիվը, որոնք խիստ ներամփոփվեցին: Տուժած շրջանում միջոցառում-

ներ են տարվում աղետից տուժածների ֆիզիկական եւ հոգեբանական վերականգնման համար՝ օգնելով վերագտնել կյանքի իմաստը եւ ուրախությունը: Նաեւ միջոցառումներ են իրականացվում՝ համայնքների ձեւավորման եւ շրջանի համար հոգ տանելու ուղղությամբ, որպեսզի ծերերը հասարակությունից չհեռանան: Շնորհիվ այդպիսի աշխատանքի, շատ տուժածներ կարողացան վերականգնել իրենց ֆիզիկական եւ հոգեկան առողջությունը: Բացի դրանից, աղետից անմիջապես հետո, սկսվեց մշակութային գործունեություն, որը նոր զգացողություններ եւ ապրելու ուժ տվեց շատ մարդկանց: Այդ շրջանում, երկրաշարժից հետո, քաղաքի բնակիչների եւ մասնավոր խմբերի մշակութային ակտիվությունն աշխուժացավ:

Աղետի շրջանում մեծացավ բնակիչների ցանկությունը՝ մասնակցություն ունենալու իրենց խնդիրների լուծմանը, եւ գտնվեցին գործունեության նոր ոլորտներ, ինչպես, օրինակ, բարեկեցությունը, անվտանգության միջոցառումները, շրջակա միջավայրը, մշակույթը, եւ այլն: Աղետից հետո առօրյա կյանքին վերադառնալու նպատակով կարեւոր է նպաստել բնակիչների համագործակցությանը եւ աջակցությանը սեփական համայնքին:

Շարունակելի

Բան Կի Մուն
ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղար

Մի՛ սպասեք աղետին

Ոչ մի երկիր չի կարող իրեն թույլ տալ անտեսել Հայիթիի եւ Չիլիի երկրաշարժերի դասերը: Մենք չենք կարող կանխել այսպիսի աղետները: Սակայն մենք կարող ենք էապես նվազեցնել դրանց ազդեցությունը, եթե ազդեցության նվազեցման ճշգրիտ քայլեր ձեռնարկվեն նախօրոք:

Մի շաբաթ առաջ ես այցելեցի Չիլիի երկրաշարժի շրջան ու ականատես եղա, թե քանի կյանք է փրկվել շնորհիվ այն բանի, որ Չիլիի իշխանությունները սերտել են անցյալի դասերը եւ ուշադիր են եղել ահագնացող ճգնաժամի մասին նախազգուշացումների հանդեպ:

Հնարավոր եղավ խուսափել ավելի մեծ թվով զոհերից, քանզի երկրաշարժի կոդավորման ճշգրիտ կառույցներ էին ստեղծվել: Առաջին արձագանքման խմբերին նախապես կրթելն ու անհրաժեշտ միջոցներով ապահովելը հանգեցրեց նրան, որ առաջին ցնցումներից հետո օգնությունն արդեն այնտեղ էր: Այն համոզման առկայությունը, որ կառավարությունները պատասխանատու են ինչպես ներկա, այնպես էլ ապագա մարտահրավերներին դիմակայելիս, մարդկային կյանքեր փրկելու գործում արեց ավելին, քան հետճգնաժամային օգնության ցանկացած փորձ կարող էր անել:

Չնայած երկրաշարժի հզորությանը, որը գրանցվածների մեջ իր մեծությամբ հինգերորդն է՝ Ռիխտերի սանդղակով 8.8 մագնիտուտ, Չիլիում զոհերի թիվը հաշվվում է հարյուրներով: Հայիթիում ավելի նվազ ուժգնությամբ երկրաշարժի զոհերի թիվը հասնում է հարյուր հազարների: Հայիթին ուներ չգործող կամ թույլ կոդավորումներ եւ վատ էր պատրաստված:

Դասերը կիրառելի են բոլորի համար: Ոչ մի երկիր ապահովված չէ աղետից՝ երկրաշարժ լինի, ջրհեղեղ, փոթորիկ թե տաք հոսանք: Մեր համոզմամբ, գլոբալ տաքացմամբ պայմանավորված, ավելի ու ավելի շատ աղետներ են սպառնում բոլոր հինգ մայրցամաքներին: Աշխարհի ծայրահեղ աղքատության մեջ գտնվող շատ մարդիկ ապրում են երկրաշարժի կամ ջրհեղեղի գոտում գտնվող բարձր ռիսկայնության, խիտ բնակեցված քաղաքներում:

Աղետի ռիսկերի նվազեցման մշակույթը պիտի տարածվի: Ինձ վստահեցրել են, որ հարցի առնչությամբ սկիզբն արդեն տրված է:

2005 թ. աշխարհի 168 երկրների կողմից ստորագրվեց աշխարհը բնական վտանգներից ծագող աղետներից ավելի ապահով դարձնելու տասնամյա գործողությունների «Հյոգո» ծրագիրը:

«Հյոգոն» կառավարություններին հնարավորություն է տալիս գնահատելու եւ կրճատելու ռիսկերը՝ ավելի լավ պլանավորելու, ուսուցանելու եւ կրթելու միջոցով:

Հիմնվելով «Հյոգոյի» շրջանակի վրա՝ ՄԱԿ-ը աղետի ռիսկի նվազեցումը դարձրել է առաջնահերթություն: Ես՝ գործողությունների «Հյոգո» ծրագրի իրականացման համար, հատուկ ներկայացուցիչ եմ նշանակել:

Որոշ պետություններ պնդում են, որ չեն կարող թույլ տալ ընդունելու կանխարգելման ծեւաչափը: Ես ասում եմ՝ ոչ մի երկիր չի կարող իրեն թույլ տալ անտեսել այն:

Յուրաքանչյուրն իր դերն ունի:

Կառավարությունը՝ կենտրոնական, թե տեղական, պետք է անի անհրաժեշտ ամեն ինչ՝ որպեսզի համայնքներն ի զորու լինեն դիմակայելու շարունակական մարտահրավերներին եւ հանկարծակի հարվածներին:

Այս միջոցները կօգնեն հազարավոր մարդկանց կենդանի մնալ: ՄԱԿ-ը պատրաստ է օգնել կառավարություններին՝ պատրաստվելու համապետական եւ տեղական մակարդակներում:

Չիլիի եւ Հայիթիի երկրաշարժերը եւս մեկ անգամ ցույց տվեցին, թե որքան կարեւոր են նախքան աղետը ձեռնարկված գործողությունները: Որպեսզի թույլ չտանք, որ բնական վտանգներն աղետի վերածվեն, պետք է բոլորս գործենք նախօրոք եւ ավելի խելացի կերպով:

Մարդը մշակույթների խաչմերուկում

Այսօր մենք զարգացման մի այնպիսի փուլում ենք, երբ մարդկանց միջեւ գոյություն ունեցող տարածքային եւ ժամանակային սահմանները փոքրացել են: Հաղորդակցման եւ տրանսպորտային միջոցների զարգացումը հանգեցրել է նրան, որ այսօր աշխարհն ավելի փոքր է դարձել, քան առաջ էր: Մարդկության զարգացման այս նոր շրջանը կարծես ջնջել է այն բոլոր սահմանները, որոնք մինչ այդ խոչընդոտում էին տարբեր ազգերի, տարբեր մշակույթների հաղորդակցմանը:

Այսօր, այդ շփումը դարձել է այնքան սովորական ու իրական, որքան այն հազվադեպ ու անիրական էր 100 տարի առաջ: Այսօր մեզանից յուրաքանչյուրը ցանկացած պահի կարող է հայտնվել ցանկացած երկրում՝ հաղորդակից դառնալով այդ երկրի մշակույթին, սովորույթներին, ավանդույթներին: Ի՞նչ ազդեցություն է ունենում այդ ամենը մարդու ինքնության վրա, ինչպե՞ս է նա հարմարվում նոր կյանքին, ի՞նչ գործոններ են նպաստում մի երկրի բնակիչների եւ նոր եկածների միջեւ ներդաշնակ հարաբերություններ կառուցելուն. նմանատիպ շատ այլ խնդիրներ են ծառանում մարդու առաջ, երբ նա գտնվում է մշակույթների խաչմերուկում:

Երբ մարդը հայտնվում է նոր մշակույթում կամ իրար են հանդիպում երկու տարբեր մշակույթներ կրող մարդիկ, ապա ընդհանուր լեզու գտնելու համար, այսինքն՝ հաղորդակցվելու համար, նրանք պարտադրաբար, թե ինքնակամ, փորձում են միմյանց հասկանալ: Այստեղ մենք հանդիպում ենք ակկուլտուրացիայի (նոր կամ ուրիշ մշակույթի յուրացման) երեւույթին, որն իրենից ներկայացնում է միաժամանակ երկու տարբեր մշակույթների փոխազդեցություն, որի դեպքում մի մշակույթի ներկայացուցիչները յուրացնում են մյուս մշակույթի նորմերը, արժեքները, սովորույթները: Որպես կանոն, այդ նորմերը ստիպված են յուրացնել եկվորները: Ազգային փոքրամասնությունները կարող են լիովին մերժել դոմինանտ մշակույթի արժեքները, կարող են լիովին ընդունել դրանք կամ՝ մոտենալ ընտրողաբար: Այդ իսկ պատճառով առանձնացնում են երեք հիմնական ռեակցիաներ, որոնք կարող են ցուցաբերել մարդիկ՝ գտնվելով այլ մշակույթում:

1. Ընդունում, երբ անձը լիովին փոխարինում է իր մշակույթը նոր մշակույթով:

2. Ադապտացիա (հարմարում), երբ տեղի են ունենում որոշակի, մասնակի փոփոխություններ հարմարվողի մշակույթում:

3. Անջատում, երբ անձն անջատվում, առանձնանում է նոր մշակույթից, այսինքն չի ընդունում այն:

Նոր կամ ուրիշ մշակույթի յուրացումը կատարվում է տարբեր մշակույթների հետ անընդմեջ եւ անմիջական շփման հետեւանքով: Այստեղ պետք է հաշվի առնել մի շատ կարեւոր հանգամանք՝ ինչ պատճառներով է մարդը հայտնվել ուրիշ մշակույթում: Ոմանք հայտնվում են իրենց կամքով, ոմանք՝ ստիպված, պարտադրաբար, ոմանք՝ կարճ ժամանակով, ոմանք էլ՝ երկար: Այսինքն՝ եթե անձը գնում է ուրիշ երկիր ավելի բարեկեցիկ կյանքի ակնկալիքով՝ բոլորովին այլ է այն դեպքից, երբ մարդը հայտնվում է օտար հողում՝ վտարվելով իր հայրենիքից:

Ամեն դեպքում, անկախ նրանից, թե մարդն ինչ պատճառներով է հայտնվել այլ մշակույթում, միեւնույն է նա ունենում է հարմարման խնդիր.

1. Ընդհանուր հարմարում՝ առօրյա կյանքի խնդիրները հաղթահարելու ունակություն:

2. Միջանձնային հարաբերությունների հետ կապված հարմարում՝ տեղաբնակների հետ արդյունավետ շփում հաստատելու կարողություն:

3. Աշխատանքի հետ կապված հարմարում՝ թե մարդն ինչ հաջողությամբ է կատարում եւ հաղթահարում մասնագիտական խնդիրները:

Առանձնացվում են հարմարման հետեւյալ ձեւերը. հոգեբանական եւ սոցիալ-մշակութային:

Հոգեբանական հարմարման մաս են կազմում հուզական ռեակցիաները, որոնք կապված են միջմշակութային տեղափոխման պրոցեսում բավարարվածության եւ բարօրության զգացողության հետ: Այն իր մեջ ներառում է անձնային եւ էթնիկական նույնականացման հասկացությունը, հոգեպես առողջ լինելու եւ անձնային ոլորտում բավարվածության զգացողության հասնելը, իսկ սոցիալ-մշակութայինը կապված է վարքի հետ՝ թե մարդը որքան արդյունավետ է կարողանում փոխազդել նոր մշակութային շրջապատին, ինչպես է կարողանում հաղթահարել առօրեական խնդրիրները՝ կապված ընտանիքի, ուսման եւ աշխատանքի հետ:

Հոգեբանական հարմարման պրոցեսի ընթացքում անխուսափելի է սթրեսը, տագնապայնությունը, դեպրեսիան եւ օտարվածության զգացողությունը, բարձր է հոգեսոմատիկայի դրսեւորման մակարդակը: Սթրեսի հիմնական պատճառներից է ոչ հաջող հարմարումը, որն էլ բնականաբար ունենում է իր ազդեցությունը ամենօրյա կյանքի վրա: Ենթադրվում է, որ սթրեսի առաջացման պատճառները կախված են նաեւ մարդու անհատական առանձնահատկություններից, այսինքն, եթե մեկի համար տվյալ իրավիճակը սթրեսային է, մյուսի համար կարող է լինել բավական բարվոք եւ ընկալվի որպես նոր որակներ ձեռք բերելու լավ հնարավորություն: Սա նշանակում է, որ նոր մշակույթում գտնվելը կարող է ընդլայնել անձի կենսական հնարավորությունները, կարող է նաեւ խոչընդոտել զարգացման ընթացքը:

Կարեւոր է նաեւ, թե անձը որքանով է կարողանում հաղորդակցման եզրեր գտնել տեղաբնակների հետ, ինչպիսին են նրա հաղորդակցման մարտավարությունը, միգրացիայի դրդապատճառները, ինչպիսին են մարդու ռեսուրսային հնարավորությունները՝ կրթությունը, սոցիալական աջակցությունը եւ այլն: Կարեւոր է, թե անձը որքանով է սոցիալական աջակցություն ստանում իր ընտանիքի, ընկերների, ծանոթների կողմից: Կարեւոր գործոն է նաեւ տարիքը, քանի որ երիտասարդներն ավելի հեշտությամբ են հարմարվում նոր պայմաններին, քան՝ մեծահասակները: Ազդում է կրոնը. անձը, ով գտնվում է այնպիսի երկրում, որտեղ դավանում են նույն կրոնը, ինչ ինքը, ապա նրա հարմարումն ավելի բարենպաստ կընթանա, քան, օրինակ, քրիստոնյայինը, ով գտնվում է մուսուլմանական երկրում, եւ ընդհակառակը:

Բնական է, որ տարբեր մշակույթներում հաղորդակցման ոչ վերբալ ձեւերը տարբերվում են, որն էլ հաճախ բերում է տարբեր մշակույթի մարդկանց միջեւ թյուրըմբռնումների: Օր.՝ Լատինական Ամերկայում, Հարավային Եվրոպայում մարդիկ ավելի են հակված շոշափական կոնտակտի՝ ի տարբերություն Արեւելյան Ասիայի: Այս տարբեր մշակույթի ներկայացուցիչների անդիպման ժամանակ եվրոպացու, լատինաամերիկացու մոտ ստեղծվում է այնպիսի տպավորություն, կարծիք, որ ասիացիները սառն են, փակ, ոչ ընկերասեր, իսկ ասիացիները վերջիններիս մասին մտածում են, որ կպչուն են ու ագրեսիվ: Իսպանացիներին, ֆրանսիացիներին, հույներին ու իտալացիներին հատուկ է ժեստերի վառ դրսեւորումը, մինչդեռ հյուսիսում ապրող մարդիկ ավելի զուսպ են այս հարցում: Ճապոնացիներն ավելի հակված են լռելու, քան ամերիկացիները, վերջիններս ավելի բաց են բացասական էմոցիաները արտահայտելիս, մինչ ճապոնացիները ճնշում են դրանք: Ենթադրվում է, որ հարմարման հետ կապված խնդիրները սկզբնական շրջանում այդքան ակնհայտ չեն դրսեւորվում, որովհետեւ անձը սկզբնական շրջանում զբաղված է նոր մշակույթի ուսումնասիրմամբ, եւ զգալի տարբերությունները դեռ չեն նկատվում: Սակայն որոշ ժամանակ անց այդ տարբերությունները դուրս են գալիս ջրի երես եւ սկսում են փոխել սկզբնական պատկերացումը տվյալ մշակույթի մասին: Որովհետեւ այն ամենը, ինչը մինչ այդ մարդուն զվարճացնում էր եւ հետաքրքիր էր թվում, ապա որոշ ժամանակ անց կորցնում է իր արժեքը եւ անձն արդեն սկսում է մի ուրիշ բանի կարիք զգալ, որն այդ մշակույթը դեռ չի կարող տալ: Եթե անձն այս փուլում երկար է մնում, ապա նա սկսում է տհաճություն ապրել այդ մշակույթում ապրած իր յուրաքանչյուր պահից: Սակայն, եթե նա կարողանում է շուտ կողմնորոշվել այս իրավիճակում, ապա աստիճանաբար կարողանում է վերագտնել իրեն եւ կյանքն իմաստավորել: Հասարակության լիարժեք անդամ զգալու համար մարդն աստիճանաբար սկսում է հարմարվել նոր նորմերին եւ սովորույթներին:

Աննա Կարապետյան
հոգեբան-խորհրդատու

Բանանը կարող է բուժել ՁԻԱՀ-ը

Միչիգան նահանգի գիտնականների մի խումբ հայտնաբերել է, որ բանանի մեջ կենտրոնացած սպիտակուցը կարող է հակավիրուսային նույնքան արդյունավետ ազդեցություն ունենալ, որքան ժամանակակից համանման դեղամիջոցները:

Խոսքը լեկտինների շարքին դասվող սպիտակուցի մասին է: Գիտնականները հայտնաբերել են, որ հենքի վրա ստացված դեղամիջոցները կարող են կանխարգելել ՁԻԱՀ-ի հարուցիչների մուտքը բջջի իմունային համակարգ:

Գիտնականները պնդում են, որ այսօր այս ոլորտում ազդեցության նոր մեխանիզմ ունեցող դեղամիջոցների պահանջ կա:

Յուրաքանչյուր հիվանդին, որը հակավիրուսային դեղամիջոցներով բուժում է ստանում, ընկնում է երկու հիվանդ, որը վարակվում է ՁԻԱՀ վիրուսով:

Բանանից ստացված լակտինը, պարզվում է, կարող է խափանել անընդհատական մուտացիաների մեխանիզմը, որն այդքան դժվարացնում է այս վիրուսի դեմ պայքարը: Այդ միկրոօբիցիդը շատ ավելի էժան կնստի, քան գոյություն ունեցող դեղամիջոցները: Եվ, եթե այն նույնիսկ միայն 60 %-ով արդյունավետ լինի, կկանխարգելվի 2.5 միլիոն վարակման դեպք՝ երեք տարվա ընթացքում:

Այս հայտնագործությունը կարող է հատկապես նշանակություն ունենալ զարգացող երկրների համար, որտեղ ՁԻԱՀ-ի համաճարակը շարունակվում է:

Քաղցկեղի առաջացման նոր պատճառ

Որպեսզի քաղցկեղային նորագոյացություն հայտնվի, պարտադիր չէ, որ պաթոգեն մուտացիան սկսվի միայն մեկ բջջում: Մուտացիան կարող է սկսվել միաժամանակ երկու բջջում: Յեյլի համալսարանի հետազոտողներին հաջողվել է ապացուցել այս սարսափելի տեսությունը՝ դրոզոֆիլների հետ փորձերի շնորհիվ:

Քաղցկեղն այսօր ակտիվորեն ուսումնասիրվում է: Հայտնաբերվում են դրա առաջացման եւ բուժման նոր պատճառներ ու միջոցներ: Մինչեւ վերջերս գիտնականների մեծ մասը համարում էր, որ ուռուցքը սկսում է զարգանալ մի բջջում սկիզբ առած մուտացիայի հետեւանքով, սակայն դոկտոր Տյան Սյուայի գլխավորած խումբը համոզվել է, որ ամեն ինչ շատ ավելի բարդ է:

Կանցերոգենեզի գործընթացը դիտելու համար, գիտնականները դրոզոֆիլ-ճանճի (Drosophila melanogaster) մուտագեն բջիջներ են աճեցրել: Գիտնականները գիտեն, որ ուռուցքների զարգացումն առաջացնում է RAS գենի մուտացիան, որի ժամանակ սկսում է ձեւավորվել կանցերոգեն սպիտակուցը, ինչպես նաեւ scrib գենի մուտացիան, որը խոչընդոտում է հակառակ գործընթացը: Հենց որ RAS եւ scrib գենները սկսում են սխալ աշխատել, առաջանում է չարորակ ուռուցք:

Սակայն կատարված հետազոտությունը ցույց տվեց, որ ուռուցքը զարգանում է, եթե փոխազդեցության մեջ են մտնում այն բջիջները, որոնցից առաջինը ձեւափոխել էր RAS գենը, իսկ երկրորդը՝ scrib-ը:

- Վաս նորությունն այն է, որ հյուսվածքում երկու տարբեր մուտացիաներով բջիջների կուտակումն ավելի հավանական է, քանի միանգամից երկուսը՝ մեկում: Եվ օփումը, կարճ միացման նման, սկիզբ է դնում սարսափելի գործընթացին, - ասում է հետազոտության ղեկավարը:

Եւս մեկ բացահայտում էր այն, որ ուռուցքի աճն արագանում էր, եթե ճանճի օրգանիզմը վնասված էր լինում: Բանն այն էր, որ նյութերը, որոնք մասնակցում էին աճի գործընթացին, ավելի ակտիվ արտադրվում ու փոխանցվում են վնասվածքների ժամանակ: Այստեղ ամեն ինչ պարզ է առանց բարդ հետազոտությունների՝ մի հիվանդության դեմ պայքարելն ավելի հեշտ է, քան՝ երկուսի:

Բժիշկները կարծում են, որ մարդկությունը կանգնած է օնկոլոգիական հիվանդությունների առաջացման խորքային գործընթացների ընկալման շեմին:

արտակարգ ժամանց

Կենդանիները՝ փրկարար

Ամերիկյան Zootoo.com կայքի լրագրողները կազմել են վերջին տարիներին հերոսական պահվածքով աչքի ընկած կենդանիների ցուցակը, որոնք ծանր պահերին օգնության են հասել իրենց տերերին ու փրկել նրանց կյանքը:

Զանգահարել 911

2007 թ. Ֆլորիդայում ապրող բիգլ ցեղատեսակին պատկանող Բել անունով շունը, տեսնելով, որ շաքարախտով հիվանդ իր տերն ուշակորույս ընկնում է գետնին, ահազանգում է 911 եւ փրկում տիրոջ կյանքը:

Շունը հատուկ կենդանիների համար նախատեսված շտապօգնության դասընթաց էր անցել եւ, ինչպես երեւում է՝ գերազանցությամբ ավարտել: Բելը դառնում է պատմության մեջ առաջին շունը, որն այդ դասընթացի ընթացքում ստացած գիտելիքներն օգտագործում է ըստ նշանակության: Այն է՝ տեսնելով տիրոջն ընկած վիճակում՝ նա վազում է հեռախոսի մոտ եւ քթով սեղմում «911» ահազանգելու հատուկ կոճակը:

Ժամանակին կանչի վայր հասնելով՝ բժիշկները կարողանում են օգնություն ցույց տալ Բելի տիրոջը:

Հաֆ-հաֆ-հաֆ

2005 թ. անգլիական քինգչարլզ-քավալեր տեսակի Դյուք անունով սպանիելը շատ ավանդական ձեւով՝ բարձրաձայն հաչալով փրկում է իր տիրոջ կյանքը:

Երբ լողավազանում լողացող նրա տերն անսպասելիորեն սրտի նոպա է ունենում, շունն այնպիսի աղմուկ է բարձրացնում, որ հարեւանները, իրար խառնվելով, հասկանում են, որ ինչ-որ բան այն չէ: Նրանք շտապում են օգնության եւ, ուշագնաց տղամարդուն լողավազանից հանելով, շտապօգնություն կանչում:

Առաջին օգնություն

Թոբի անունով ոսկեգույն ռետրիվերի փրկարարական եւ առաջին օգնության մասին գիտելիքներն ապշեցնում են նույնիսկ փորձառու փրկարարներին:

Շան տիրուհին խնձոր էր ուտում, երբ մրգի մի կտոր թռչում է նրա շնչափողը, եւ կինն սկսում է խեղդվել: Նա փորձում է ինքն իրեն օգնել՝ կրծքին ու մեջքին հարվածներ հասցնելով, սակայն՝ ապարդյուն: Երբ նա ընկնում է գետնին ու սկսում կորցնել գիտակցությունը, Թոբին ցատկում է կնոջ կրծքին եւ թաթերով ուժեղ հարվածում: Խնձորի չարաբաստիկ կտորը դուրս է թռչում կնոջ շնչափողից, եւ նա կարողանում է ազատ շնչել:

Սեփական ջերմությամբ

Սեդի անունով շոտլանդական հովվաշունն ամենուր ուղեկցում էր իր պաշտելի տիրոջը՝ Մալվինին:

2003 թ. աշնան ճակատագրական մի օր Մալվինը որոշում է հատել իր տան շուրջն աճող այգու վնասված ծառերը: Շունն, ինչպես միշտ, նրա կողքին էր: Ծառերից մեկը, որ բավական հին էր, ընկնելիս կոտրվում է եւ ճխլում Մալվինին: Շունն անմիջապես վազում է տուն եւ օգնության կանչում նրա կնոջը:

Մինչեւ փրկարարների ժամանումը՝ նա ոչ միայն չի հեռանում տիրոջ կողքից, այլեւ իր մարմնի ջերմությամբ տաքացնում է նրան եւ լիզում դեմքը, որ վերջինս գիտակցությունը չկորցնի:

Կատվի համառությամբ

2002 թ. ԱՄՆ Ինդիանա նահանգում բնակվող Քիսլինգների տանն արտակարգ պատահար է տեղի ունենում:

Ուշ գիշերը նկուղում գտնվող գազի պոմպը շարքից դուրս է գալիս, եւ շմոլ գազն սկսում է լցվել առանձնատուն: Տանտերերը քնած էին, բաց պատուհանի մոտ քնած էր նաեւ նրանց կատուն՝ Վիննին:

Հետագայում Քեթի Քիսլինգը պատմում է, որ արթնացել էր այն բանից, որ կատուն բարձր ձայներ էր արձակում եւ իրեն տառացիորեն քարշ տալիս մազերից բռնելով: Կինը փորձում է տեղից բարձրանալ, բայց ուժեղ գլխապտույտ է ունենում եւ կրկին ընկնում է անկողնու վրա: Սակայն Վիննին ոչ մի կերպ չէր հանդարտվում: Նա շարունակում էր բարձր մլավել ու թաթերով հարվածներ հասցնել տիրուհուն: Քեթին կարողանում է, մեծ ճիգեր գործադրելով, հեռախոսի վրա հավաքել 911: Այդ պահին նրա ամուսինն ու տասնչորսամյա որդին արդեն գտնվում էին անգիտակից վիճակում: Ու եթե չլիներ կատվի համառությունը, նրանք հազիվ թե մեկ ժամից ավել ապրեին...

Ջրափրկարարը

2006 թ. վելշ-կորգի ցեղատեսակին պատկանող Մարգարետ անունով շունը փրկում է իր տիրուհու եւ նրա երկամյա զարմուհու կյանքը:

Մարգարետի տիրուհին՝ փոքրիկ Ջուլիայի հետ, նավակով ուղեւորվում են լճի կենտրոն՝ բադերին կերակրելու: Երեխան թեքվում է առաջ ու, չկարողանալով պահել հավասարակշռությունը, ընկնում է ջուրը: Կինը նետվում է ջուրը, որպեսզի օգնի երեխային, սակայն ինքն էլ է սկսում սուզվել: Նա միայն հասցնում է ձայն տալ ափին գտնվող շանը: Մարգարետը լողում է դեպի նավակը, ատամներով բռնում երեխայի շապիկից ու նրան ապահով հասցնում ափ: Ջուլիայի մորաքույրը, բարեբախտաբար, կարողանում է կառչել նավի եզրից ու դիմանալ մինչեւ փրկարարների ժամանումը:



§²ñï³Ï³ñ·Ã»ñÃ¦
ß³µ³Ã³Ã»ñÃÇ
ÑÇÙÝ³¹Çñ »ô Ññ³ï³ñ³ÏÇã
§²ñï³Ï³ñ·³ÉÇù¦
Éñ³ï í³Ï³Ý Ï»ÝïñáÝ ê ä À

îÝûñ»Ý`
ÜáõÝ» ¶ñÇ·áñÙ³Ý
¶éË³íáñ ËÙµ³·Çñ`
ÜÇÏáÉ³Ù ¶ñÇ·áñÙ³Ý

ÊÙµ³·ñÇ ï»Õ³Ï³É`
²í³. º÷ñ»ÙÙ³Ý
Ò»ô³íáñáÕ`
ì³ñ¹³Ý ¶³ëå³ñÙ³Ý

ºñ»ô³Ý, äáõßÏÇÝÇ 25
Ð»é. 56 76 56, 24 24 22
E - mail: tert@emergency.am

îå³·ñí³í¿ §îÇ·ñ³Ý Ø»í¦ Ññ³ï³ñ³ÏãáõÃÙ³Ý
ïå³ñ³ÝáõÙ` ²ñß³ÏáõÝÙ³ó 2
ì³í³ÉÁ` 2 ïå³·ñ³Ï³Ý Ù³ÙáõÉ
ä³ï í»ñ`435, ·ñ³ÝóÙ³Ý íÏ³ÙÙ³Ï³Ý`1074,
ïå³Ù³Ý³ÏÁ` 5000 ûñÇÝ³Ï:
Ստորագրված է տպագրության
8.4.2010 թ.